ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<< 11 >> << հոկտեմբերի >> 2016թ. N 91
ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ <<ՋԱՌԻԹԱՓԻ ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Ներքին աուդիտի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 5-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով,Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջներով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2016 թվականի ներքին աուդիտի հաստատված ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Ջառիթափի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ում անցկացնել 2015 թ.-ի բյուջետային տարվա գործունեության ֆինանսական աուդիտ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Նորայր Կարապետյանի՝ աշխատանքային խմբի ղեկավար, գլխավոր մասնագետներ Հասմիկ Ավետիսյանի և Խիկար Խաչատրյանի կողմից:
2. Խմբի աշխատանքներին մասնակից դարձնել վերոհիշյալ ՊՈԱԿ-ի տնօրենին և հաշվապահին:
3. Աուդիտի անցկացման ժամկետը սահմանել 6 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2016 թվականի հոկտեմբերի 12-ին, ավարտել 2016 թվականի հոկտեմբերի 19-ին:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ